ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի արտահերթ նիստի

30.10. 2015թ. Քաղաք Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Գ. Առուշանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության նախագծի քննարկման մասին: /Զեկ.՝ Ն. Խուդավերդյան/

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ԵՊՀ կարգավիճակի փոփոխություններով պայմանավորված /դարձել է հիմնադրամ/ փոխվել է նաև մասնաճյուղի կարգավիճակը: Այն դարձել «ԵՊՀ» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ, հետևաբար փոփոխվել և հաստատվել է նրա նոր կանոնադրությունը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փոփոխության ենթարկել նաև տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունը, ինչի համար պետք է հիմք ծառայի ԵՊՀ ֆակուլտետների օրինակելի կանոնադրությունը:

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց տնտեսագիտության ֆակուլտետի նորովի մշակված կանոնադրությունը. որտեղ նշված է, որ ֆակուլտետի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: Կոլեգիալ կառավարման մարմինը՝ ֆակուլտետի խորհուրդը, վերածվել է

ֆակուլտետի գիտական խորհրդի: Ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը: Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի կազմից դեկանի ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը: Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց նաև , որ ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Ընդ որում խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50%-ը: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում է դեկանը՝ որպես նախագահ, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը: Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով: Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկանուծությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները,որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները: Գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են, որոնց ընտրությունն իրականացվում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետն 5 տարի է: Գիտական խորհրդի գործառույթներն ու իրավասությունները նույնն է:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք մեծ նշանակություն տվեցին գիտխորհրդի ձևավորման համամասնական սկզբունքին, կարևորեցին արտաքին շահակիցների մասնակցությունը ֆակուլտետի աշխատանքներին: Ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետները, հանդիսանալով տարածաշրջանի աշխատաշուկայի ներկայացուցիչներ, իրենց գործնական օգտակար խորհրդներով և հարցադրումներով, կնպաստեն ֆակուլտետի ուսումնական գործընթացի բարելավմանը ու արդյունավետության բարձրացմանը::

Որոշեցին - ընդունել տնտեսագիտության ֆակուլտետի նոր կանոնադրության նախագիծը և ներկայացնել ԻՄ գիտխորհրդի հաստատմանը:

Գիտխորհրդի նախագահ	*Ն. Խուդավերդյան*
Քարտուղար	*Գ. Առուշանյան*